ԱՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i73.262

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում արծարծված հարցերը և դրանցից բխող առաջարկությունները նպատակ ունեն բարելավելու հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում մայրենիի դասագործընթացի արդյունավետությունը ներառական կրթության համատեքստում: Փաստն այն է, որ ունենք լավ ուսուցիչներ, ներառական կրթության կազմակերպման ձեռքբերումներ, սակայն բովանդակային լուրջ խնդիրներ: Ակնհայտ է, որ ուսուցիչները (որքան էլ նրանք հմուտ են ու փորձառու) դժվարություններ են ունենում ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ աշխատելիս: Ճիշտ է, նրանք մեթոդական հնարներ ու միջոցներ փորձում են կիրառել. դյուրինացնում են, պարզեցնում, երբեմն պարզապես պակասեցնում դասագրքերում առկա առաջադրանքները, սակայն միշտ չէ, որ այդ աշխատանքները լինում են արդյունավետ: Պատճառները շատ են ու բազմազան: Խնդիրն առավել է ընդգծվում մտավոր զարգացման դժվարություններ ունեցող երեխաների ուսուցման ընթացքում:

Սույն հոդվածում ներկայացրել ենք թե՛ գրաճանաչության և թե՛ ընթերցանության ուսուցման ընթացքում հարմարեցված առաջադրանքներ, որոնք կնպաստեն ԿԱՊԿ ունեցող սովորողների ոչ միայն գիտելիքների ձեռքբերմանը, այլև ինքնուրույնության, ստեղծարարության զարգացմանը՝ որոշ դժվարություններ հաղթահարելու ճանապարհով:

Բանալի բառեր և արտահայտություններ. ներառում, ներառական կրթություն, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (ԿԱՊԿ) ունեցող սովորող, ուսումնական նյութի հարմարեցում, կարդալու հմտություն, ընթերցողական կարողություն, «երեխան երեխային» սկզբունք:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ներառում», «Ներառական կրթություն» հասկացություններն ունեն շատ լայն իմաստ, սակայն մեր իրականություն մտան որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող անձանց նկատմամբ ոչ խտրական վերաբերմունք դրսևորելու, նրանց համար արդյունավետ կրթություն ապահովելու, սոցիալականացմանը նպաստող հիմնական պայմաններ:

2021թ. ՀՀ կրթական բոլոր հաստատություններում սովորում են ԿԱՊԿ ունեցող երեխաներ: Ժամանակակից կրթության հիմքում այն համոզմունքն է, որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակարգի պարտականությունն է: Դրան է միտված ներառական կրթությունը, որը, բնականաբար, ենթադրում է դպրոցի սովորական կենսաձևի վերակառուցում: Դպրոցը պարտավոր է ստեղծել պայմաններ բոլոր երեխաների, այդ թվում՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների կրթական պահանջմունքները բավարարելու համար: Հաստատության կրթական գործընթացում ներմուծվում են բովանդակային և գործառութային բնույթի մի շարք փոփոխություններ: Իսկ դրա համար անհրաժեշտ է բազմակողմանի (մանկավարժական, հոգեբանական, զարգացնող, սոցիալական) աջակցություն: Այստեղից առաջանում է առարկայական ծրագրերի, ուսումնաօժանդակ նյութերի, մեթոդական ուղեցույցների հարմարեցման, մշակման և կիրառման խնդիր՝ յուրաքանչյուր սովորողի կարիքների ու պահանջմունքների բացահայտմամբ և հաշվառմամբ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունը կատարելիս կիրառել ենք դիտման, հարցախույզի, ստացված տվյալների վերլուծության և համադրման մեթոդները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սույն հոդվածի հիմնական դրույթները քննարկվել են Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստերում և ներառվել են մագիստրոսական կրթական ծրագրի ընտրովի դասընթացի բովանդակության մեջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մեր դիտարկումները, համապատասխան ուսումնասիրությունները, զրույցներն ու հարցախույզները ցույց տվեցին, որ համընդհանուր ներառման պայմաններում տարրական դասարանների ուսուցիչները դժվարություններ են ունենում մայրենիի դասագործընթացում ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ աշխատանքները կազմակերպելիս: Ուսուցիչները ներառական կրթության անբաժանելի մասն են, քանի որ նրանք առանցքային դերակատարում ունեն ԿԱՊԿ ունեցող սովորողներին դասարաններում ներառելու գործընթացում **(Ներառական կրթության ռազմավարություն, 2020):**

Մեր կողմից անցկացված հարցախույզի արդյունքների վերլուծությունից պարզ է դառնում, որ տարրական դասարանների ուսուցիչներն առավել հաճախ նշում են հետևյալ դժվարությունները՝ «Ինչպե՞ս պարզեցնել ուսումնական նյութը», «Նյութի ո՞ր հատվածն ընտրել», «Ի՞նչ առանձնահատուկ մեթոդներ կիրառել», «Դասի ո՞ր փուլում ներգրավել ԿԱՊԿ ունեցող սովորողին», «Ինչպե՞ս պահպանել ԿԱՊԿ ունեցող սովորողի հետաքրքրությունը թեմայի հանդեպ», «Ինչպե՞ս բացառել խտրական վերաբերմունքը» և այլն:

Այս հարցերով պայմանավորված՝ ստեղծել ենք տարրական դասարաններում մայրենիի դասագրքերին կից հարմարեցված առաջադրանքներ: Ստորև ներկայացնենք մեր կողմից իրականացրած ուսումնական նյութերի հարմարեցման սկզբունքները:

Գրաճանաչության շրջանում հնչյուն-տառերի ուսուցման հարմարեցված առաջադրանքները կառուցված են քայլաշարային հետևյալ հաջորդականությամբ՝

1. յուրաքանչյուր ուսումնասիրվող հնչյունը պետք է առանձնացվի խոսքից. ուսումնասիրվող հնչյունը ունեցող նկարների առանձնացում, տվյալ հնչյունի ընկալում, բառում ունեցած դիրքի որոշում, հնչյունի արտասանում և այլն,
2. ուսումնասիրվող հնչյունին համապատասխան տառի ճանաչումն է բառի տարբեր դիրքերում հնչյունն ընկալելուց հետո: ԿԱՊԿ ունեցող երեխաների համար այս կապը ստեղծելը շատ բարդ է: Այդ խնդրի լուծմանն են միտված մի շարք առաջադրանքներ **(Սվաջյան Ա., Միքայելյան Ա. և ուրիշներ, 2023)**:
3. Կարդալու ուսուցման առավել բարդ աստիճանը հնչյունների համադրումն է վանկում: Այդ դժվարությունը հաղթահարելու համար ԿԱՊԿ ունեցող սովորողներին առաջարկում ենք կարդալ միավանկ բառեր, որոնք իմաստավորված են և կարդալու դրդապատճառ են ստեղծում: Այս փուլում առաջարկել ենք նաև ամբողջական բառապատկերների (միավանկ) ճանաչում և առանձնացում տրված բառ-վանկերի շարքից:
4. Կարդալու ուսուցման գործընթացի հաջորդ փուլում առաջարկում ենք նմանօրինակ վարժություններ՝

- «կարդալ» նկար-բառերը **(Միքայելյան Ա., Ավագիմյան Ա., Ավագյան Լ., Ենոքյան Տ., 2025),**
- կարդալ վանկի առաջին հնչյունը բարձրաձայն, հետո՝ վանկն ամբողջությամբ **(Սվաջյան Ա., Միքայելյան Ա. և ուրիշներ, 2023)**,
- վանկի երկրորդ հնչյունը կարդալ մտքում, ապա բարձրաձայն ամբողջ վանկը,
- գույներով համապատասխանեցնել վանկերը՝ ստանալով բառեր և կարդալ դրանք. իր ստեղծած բառը երեխան ավելի հեշտությամբ է կարդում,
- խառը տառերը դասավորել այնպես, որ ստացվի նկարում պատկերված առարկայի անվանումը, կարդալ բառը և այլն:

5. Առաջադրանքների հաջորդ խումբը վերաբերում է գրելու վարժություններին՝ տառանշանի ճանաչում և անվանում, տառապատկերի մտապահմանը նպաստող տարաբնույթ աշխատանքներ՝ տառապատկերի գունավորում, մասնիկներից տառի հավաքում, կետագծերով տառապատկերի ստացում,

տրված տառանշանների շարքից ուսումնասիրվող տառի առանձնացում, տառի գրառում տարբեր իրավիճակներում և այլն:

Շատ կարևոր է, որ երեխայի կողմից գրվող առաջին բառն արդեն լինի իր սեփականը, որը կարտահայտի սեփական դիտարկումը, զգացմունքը կամ կենսափորձը **(Գյուլամիրյան Ջ., 2018)**: Այս խնդիրը լուծելու համար սոսկ տառագրական վարժությունները բավարար չեն. հաճախ դրանց չափից շատ կիրառումը կարող է հակառակ ազդեցությունն ունենալ. ԿԱՊԿ ունեցող երեխան ոչ միայն թույլ կտա տառագրական լուրջ սխալներ, այլև ուսումնական գործընթացը կկրի հուսահատեցնող բնույթ, երեխաները կունենան անօգնականության զգացում, որն է'լ ավելի կընդգծի նրանց դժվարությունները, կխորացնի դրանք և այլն: Դրանից խուսափելու համար առաջարկում ենք այլազան հետաքրքրաշարժ աշխատանքներ, որոնք երեխաներին հաճույք կպատճառեն.

- տրված տառերից (թե' տպագիր և թե' ձեռագիր) ընտրել կրկնվող տառերը և անվանել:
- Տրված են տառեր, որոնց վրա շփոթեցնող գծեր կան: Երեխաները պետք է տարորոշեն, ճանաչեն տառերը և անվանեն դրանք (սկզբում առաջարկել ենք երեխաներին ծանոթ տառերը):
- Տառերը տրված են որոշակի անկյամբ կամ շրջված են: Երեխաները պետք է ճանաչեն և անվանեն դրանք:
- Եզրագծել կետագծերով տրված տառերը՝ գունավոր մատիտներով առանձնացնելով դրանց մասնիկները:
- Ճանաչել և անվանել իրար վրա դրված տառերը:
- Փոխելով տառի այս կամ այն մասնիկը՝ ստանալ նոր տառ, օրինակ, ի-խ, հ-ի, լ-ը և այլն:

Ցանկալի է հարմարեցված առաջադրանքներում ընդգրկել նաև հանելուկներ, շուտասելուկներ, որոնք երեխաների խոսքի, հատկապես՝ արտասանական կողմի, մտածողության, վերլուծահամադրական կարողությունների զարգացման, ուսուցման գործընթացը հետաքրքիր և դյուրին դարձնելու արդյունավետ միջոցներ

են: Այս տեսանկյունից գրաճանաչության շրջանն ամենաբարենպաստն է մի շարք հնչյունների ու բառերի արտասանության ճշգրտման, արտաբերական կառույցի մարզման ու ամրապնդման համար. անառարկելի է, որ բառի ճիշտ արտասանությունը կարևոր է անսխալ գրության համար:

Յուրաքանչյուր հաջորդ տառի վերաբերյալ առաջադրանքները ներառում են անդրադարձ նախորդ տառերին. կրկնություն, համեմատություն, տարբերությունների գտնում, համադրում, նոր բառերի, բառակապակցությունների, նախադասությունների մեջ կիրառում այլն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողը դժվարությամբ է հասկանում ուսուցչի պարզագույն հրահանգներն ու առաջադրանքները **(Аксенова А., 2002)**, հատկապես եթե դրանք երկարահունչ են, երեխան արագ հոգնում է և դադարում է լսել: Առաջադրանքների պահանջներն այնպես են ձևակերպված, որ հասկանալի լինեն սովորողներին.

- առաջադրանքում ընդգծել ենք բանալի բառերն ու արտահայտությունները
- փոխել ենք տառաչափը
- կատարել ենք հուշող նշումներ՝ գույներով, սլաքներով, ընդգծումով և այլն
- հանձնարարությունների իրականացման ընթացքում նկատի ենք ունեցել դասընկերոջ (խմբի) աջակցությունը
- որոշ դեպքերում հարցերի պատասխաննեն առաջարկել ենք ներկայացնել նկարելով կամ բանավոր
- ներկայացված տեքստերում ընդգծել ենք կարևոր մտքերը, նախադասությունները
- առաջարկել ենք թեմային առնչվող նկարներ
- հանձնարարությունը տրոհել ենք առավել մանր քայլերի

  օգտագործել ենք հնարավորինս շատ սիմվոլներ՝ նկարներ, գծապատկերներ, գունավորումներ, գծանշումներ և այլն:
- կրճատել և հարմարեցրել ենք բնագրերը՝ դրանցից հանելով բարդ մանրամասները, ավելորդ բազմազանությունը

– առաջարկել ենք խմբավորման և դասակարգման առաջադրանքներ
– առաջարկել ենք լրացուցիչ վարժություններ տվյալ թեմայի վերաբերյալ
– կարևորել ենք սովորողի ճանաչողական հետաքքրասիրությունը՝ ընտրելով համապատասխան նյութեր
– մինչև տեքստի ընթերցանությունն առաջարկել ենք կարդալու դժվարություններ ունեցող բառերի շուրջ տարաբնույթ վերլուծահամադրական աշխատանքներ։

Առաջադրանքները պետք է կրեն առավելապես խաղային բնույթ, ունենան հուզականություն (Лалаева Р., 2001). դրանց իրականացման ընթացքում երեխան գործողություններ է կատարում (տեղադրում է, դասավորում է, փակցնում է և այլն), խոսում է, համեմատում է, հակադրում է, հայտնաբերում է, պատկերացնում է, մտապահում ու մտաբերում է, կենտրոնացնում է ուշադրությունը, կամային ճիգեր է գործադրում և այլն: Առաջադրանքների համար ընտրված նկարները, պատկերները ունեն վառ գունավորում, շատ մոտ են բնական առարկաներին: Նկարների շուրջ աշխատելիս հարցերի օգնությամբ երեխաներին պետք է ուղղորդել նկատելու նկարի բոլոր տարրերը, երբեմն կռահելու նկարի այն հատվածը, որը նկարված չէ։

Հարմարեցված վարժություններն առաջարկում ենք կատարել.

- ցուցադրումով (Կատարի՛ր այնպես, ինչպես ես: Համեմատի՛ր՝ ճի՞շտ ես կատարել։) և այլն

- հիշողությամբ, մտային պլանում, իհարկե, նախնական վերլուծական աշխատանքից հետո (Հիշի՛ր: Կրկնի՛ր: Կատարի՛ր: Համեմատի՛ր:) և այլն

- նախ՝ խոսքային առաջադրանքներով ու ձևակերպումներով, որից հետո՝ ինքնուրույն:

Առաջարկում ենք սովորողի կարդալու դժվարությունների դեպքում վանկային կորերով ընդգծել կարդալու նյութը (բառը, նախադասությունը, տեքստը): Իսկ եթե ԿԱՊԿ ունեցող սովորողը բավարար մակարդակով կարդալ գիտի, առաջարկում ենք չբացատրել առաջադրանքի էությունը. երեխան

ինքնուրույն կկարդա առաջադրանքը, կփորձի հասկանալ, թե ինչ և ինչպես պիտի անի, որը նույնպես կնպաստի հասկանալով կարդալու կարողության զագացմանը:

Մեր մշակած առաջադրանքները ԿԱՊԿ ունեցող սովորողն օբյեկտիվորեն կարող է հաղթահարել. կբարձրանա նրա ինքնագնահատականը, տրամադրությունը, ուսումնական գործընթացին մասնակցելու պատրաստակամությունը և, ընդհանրապես, դրական վերաբերմունքը շրջապատի հանդեպ: Միևնույն ժամանակ այս երեխաների ուսուցման գործընթացի կարևոր պայման ենք համարում մշտապես տրամադրվող հոգեբանական աջակցությունը: Ընդ որում՝ դա խրախուսանքը կամ պարգևատրումը չէ (այն կարող է երեխային օգնել, կարող է չօգնել). խրախուսում ենք լավ կատարած աշխատանքի համար: Մինչդեռ հոգեբանական աջակցություն պետք է ցուցաբերել անգամ այն դեպքերում, երբ առաջադրանքն այնքան էլ լավ չի կատարվել (նույնիսկ վատ է կատարվել): Այն պետք է ցուցաբերվի նույնիսկ աննշան առաջընթացի համար:

Առաջադրանքների կատարման ընթացքում հաշվի ենք առել դասարանի բոլոր սովորողների ակտիվ մասնակցությունը, որը ոչ միայն ուսուցման լավագույն միջոցներից է, այլև նպաստում է սովորողների միջև դրական փոխհարաբերությունների ձևավորմանը («երեխան երեխային» սկզբունքով): Զույգով աշխատանքի միջոցով ձևավորվում են նաև ընկերոջից օգնություն ընդունելու, ընկերոջն օգնելու կարողություններ **(Միքայելյան Ա., 2016)**:

Զույգով աշխատելու պարագայում առաջարկում ենք որոշ ցուցումներ տալ երեխաներին: Դրանք կարելի է ձևակերպել հետևյալ կանոններով. «Օգնի՛ր ընկերոջդ, եթե անհրաժեշտ է», «Վատ մի՛ զգա, եթե ուղղում են քո սխալները», «Անհրաժեշտության դեպքում դիմի՛ր ընկերոջդ» և այլն:

Ուսումնական գործընթացում հատկապես կարևորում ենք, որ ուսուցիչների կողմից տրվող առաջադրանքները կատարվեն ոչ թե մեխանիկորեն, այլ իմաստավորվեն ԿԱՊԿ ունեցող սովորողների կողմից: Այդ նպատակով վարժությունների կատարման ընթացքում ուսուցիչն անընդհատ հարցեր պետք է առաջադրի երեխաներին՝ ուղղորդելով իմաստավորելու իրենց լսածն ու ասածը:

Զուգորդումների ապահովման նպատակով մենք առաջարկում ենք պարտադիր օգտագործել զննական հենքեր (նախադասությունների, բառերի, վանկերի, հնչյունների գծապատկերներ, որոնցում գույներով առանձնացված են ձայնավոր և բաղաձայն հնչյունները և այլն):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, բոլոր երեխաները կարող են սովորել, պարզապես դրա համար պետք է ստեղծել անհրաժեշտ պայմաններ: Համոզված ենք, որ ներառական կրթությունը կբարձրացնի կրթության որակը բոլորի համար. ԿԱՊԿ ունեցող երեխաների ընդունումը հանրակրթական դպրոցներ ստիպում է ուսուցիչներին դրսևորել նոր մոտեցումներ, և դրանից կշահեն բոլորը:

Կարծում ենք՝ մեր կողմից առաջարկվող աշխատանքի ձևերը կնպաստեն, որ սովորելով նույն դասարանում, նույն ծրագրով՝ երեխաները յուրացնեն **միևնույն նյութը**, իհարկե, տարբեր մակարդակներով: Առաջարկում ենք առաջադրանքի իրականացման բարդության աստիճանը համապատասխանեցնել երեխայի հնարավորություններին, որպեսզի հիասթափություն չառաջանա ուսման նկատմամբ: Մյուս կողմից էլ այն չպետք է լինի միօրինակ և դյուրին, այլ ունենա դժվարության որոշակի աստիճան, սակայն լինի հաղթահարելի, որի ընթացքում երեխան ոչ թե տանջվի, այլ ոգևորություն ապրի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գյուլամիրյան Ջ. (2018)**, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ» հրատ.:
2. **Միքայելյան Ա. (2016)**, Ներառական կրթության արդյունավետության բարձրացումը մայրենիի դասերի միջոցով, Երևան, «Մանկավարժական միտք», №1–2, էջ 353–357, «Զանգակ» հրատ.:
3. **Միքայելյան Ա., Ավագիմյան Ա., Ավագյան Լ., Ենոքյան Տ. (2025),** «Հետաքրքրաշատ մայրենի», 1–ին դասարան, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ.:

4. **Ներառական կրթության ռազմավարություն (2020)**, խմբ. կազմ՝ Հարութունյան Մ., Պողոսյան Ա., Ավագյան Ա., Գևորգյան Ե., Երևան, «Ասողիկ» հրատ.:
5. **Սվաջյան Ա., Միքայելյան Ա. և ուրիշներ (2023),** Մայրենի 1, աշխատանքային գիրք–տետր, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ.:
6. **Аксенова А. (2002)**, Методика обучения русскому языку в коррекционной школе, Москва, «Владос».
7. **Лалаева Р. (2001),** Логопедическая работа в коррекционных классах, Москва, «Владос».

REFERENCES

1. **Gyulamiryan J. (2018)**, Mayrenii owsowcman met'odika /Methodology of teaching the mother tongue/, Yerevan, “Zangak” publishing house.
2. **Mikayelyan A. (2016)**, Nerar'akan krt'owt'yan ardyownavetowt'yan bard'racowmy' mayrenii daseri mijocov /Increasing the effectiveness of inclusive education through mother tongue lessons/, Yerevan, “Pedagogical Thought”, No. 1–2, pp. 353–357, “Zangak” publishing house.
3. **Mikayelyan A., Avagimyan A., Avagyan L., Yenokyan T. (2025)**, «Hetaqrqrashat mayreni», 1–in dasaran /"Interesting Mother Tongue", 1st grade/, Yerevan, "Edit Print" publishing house.
4. **Nerar'akan krt'owt'yan r'azmavarowt'yown /Inclusive Education Strategy/ (2020)**, ed. by Harutunyan M., Poghosyan A., Avagyan A., Gevorgyan E., Yerevan, "Asoghik" publishing house.
5. **Svajyan A., Mikayelyan A. et al. (2023)**, Mayreni 1, ashxatanqayin girq–tetr /Mother Tongue 1, workbook/, Yerevan, "Edit Print" publishing house.
6. **Aksenova A. (2002)**, Metodika obucheniya russkomu yazyku v korrektsionnoy shkole /Methods of Teaching Russian in a Remedial School/, Moscow, Vlados.

7. **Lalaeva R. (2001)**, Logopedicheskaya rabota v korrektsionnykh klassakh /Speech Therapy Work in Remedial Classes/, Moscow, Vlados.

Армине Микаелян

Создание психологически благоприятных условий как средство повышения эффективности инклюзивного образования

Заключение

Ключевые слова и выражения: инклюзия, инклюзивное образование, учащийся с особыми образовательными потребностями (ООП), адаптация учебных материалов, навыки чтения, способность к чтению, принцип «ребенок — ребенку».

Поднятые в статье вопросы и вытекающие из них предложения направлены на повышение эффективности процесса обучения родному языку в начальных классах общеобразовательных школ в условиях инклюзивного образования. Дело в том, что у нас есть хорошие учителя, достижения в организации инклюзивного образования, но есть и серьёзные содержательные проблемы. Очевидно, что учителя (независимо от их квалификации и опыта) испытывают трудности в работе с учащимися с особыми образовательными потребностями. Они, правда, пытаются применять методические инструменты и средства: облегчают, упрощают, иногда просто сокращают задания в учебниках, но эти работы не всегда эффективны. Причин много и они разнообразны. Эта проблема наиболее остро проявляется при обучении детей с трудностями интеллектуального развития.

В данной статье мы представили адаптированные задания как при обучении грамоте, так и чтению, которые будут способствовать не только усвоению знаний учащимися с особыми образовательными потребностями, но и развитию самостоятельности и творческих способностей, преодолевая некоторые трудности.

Armine Mikayelyan

Providing psychologically friendly conditions for children as a means of increasing the efficiency of inclusive education

Conclusion

Key words and expressions: inclusion, inclusive education, learner with special educational needs, adaptation of educational material, reading skills, reading ability, "child to child" principle.

The issues raised in the article and the suggestions arising from them aim to improve the effectiveness of the native language teaching process in primary grades of general education schools in the context of inclusive education. The fact is that we have good teachers, achievements in organizing inclusive education, but serious substantive problems. It is obvious that teachers (no matter how skilled and experienced they are) have difficulties when working with students with SEN. True, they try to apply methodological tools and means: they facilitate, simplify, sometimes simply reduce the tasks in textbooks, but these works are not always effective. The reasons are many and varied. The problem is most emphasized during the teaching of children with intellectual development difficulties.

In this article, we have presented adapted tasks during both literacy and reading teaching, which will contribute not only to the acquisition of knowledge by students with SEN, but also to the development of independence and creativity by overcoming some difficulties.

Արմինե Միքայելյան - Մանկավարժական գիտությունների թեկնածու, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետի Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ մայրենիի ուսուցման մեթոդները տարրական դպրոցում՝ ներառական կրթության պայմաններում, մայրենիի ուսուցման մեթոդիկան

կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար, տարրական դպրոցում գործող դասագրքերի հարմարեցումներ ԿԱՊԿ ունեցող սովորողների համար: Համահեղինակ է գործող դասագրքերի հարմարեցված գիրք–տետրերի, դրանց կից մեթոդական ուղեցույցների, հեղինակ է ավելի քան 35 գիտական հրապարակման: Mikaelanarmine@mail.ru

Армине Микаелян – кандидат педагогических наук, доцент кафедры родного языка и методики его преподавания им. А. Тер-Григоряна факультета начального образования АГПУ. Научные интересы: методика преподавания родного языка в начальной школе в условиях инклюзивного образования, методика обучения родному языку детей с особыми образовательными потребностями, адаптация существующих учебников начальной школы для учащихся с ООП. Соавтор учебников, адаптированных из существующих учебников, сопроводительных методических пособий, а также автор более 35 научных публикаций. Mikaelanarmine@mail.ru

Armine Miqayelyan - Candidate of Pedagogical Sciences, Associate Professor of the A. Ter-Grigoryan Department of Native Language and Its Teaching Methods, Faculty of Primary Education, ASPU. Scientific interests: methods of teaching native language in elementary school in inclusive education, methods of teaching native language for children with special educational needs, adaptations of existing textbooks in elementary school for students with SEN. Co-author of textbooks adapted from existing textbooks, accompanying methodological guides, and author of more than 35 scientific publications. Mikaelanarmine@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 28.03.2026թ.

Հանձնարարվել է գրախոսության 10.04.2026թ.

Հրապարակման է ներկայացվել 31.07.2026թ.